2. Հայաստանի Հանրապետության բնակավայրատնտեսության նախարարությանը՝
  - 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.
  - 2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

6/11

Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Ս Ծ Է



ՀՀ բնապահպանության նախարարության  
աշխատակազմի ղեկավարի ժ/պ  
Խ.Աղաբեկյան  
<ՏԻ> ապրիլի 2015թ.

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրանաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի

1.	Ծրագրի նպատակը	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակատրուված ազգային պարկի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2.	Ծրագրի բարենորոգական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեփոխում	Կովկասի բնության Հիմնադրամի նախարարության աշխատակազմի գերմաների
4.	Ծրագիրը կատարողը	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Տավուշի մարզ, ք. Դիլիջան
6.	Ծրագրի բյուջեն	Կովկասի բնության Հիմնադրամից տասնվեցից դրամական միջոցները մուտքագրվելու են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար «Ակադ-կոնիստ ազդիկոլ բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 32100.0 հազ.դրամ):
7.	Բարեփոխություն ստացողը	Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան

*Աղաբեկյան*

6/11

8. Ծրագրի իրականացման տնտեսությունը  
 «Հրապարակային ծախսերի կառավարման և մրցակցային պայմանագրերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագիրը  
 20.04.2015թ. – 31.12.2015թ. – 32 100.0 հազ.դրամ, այդ թվում՝

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

20.04.2015թ. – 31.12.2015թ.  
 ՀՀ բնագիտականության նախարարության, Կովկասի Քննչական Հիմնարկում և «Դիվիզան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագիրը  
 20.04.2015թ. – 31.12.2015թ. – 32 100.0 հազ.դրամ, այդ թվում՝

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում /4-րդ եռամսյակ/ – 1530.0 հազ.դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)
1. Բեռնի, ռեզուլտ	խտր	3825	1530.0

2. Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերում /3-րդ եռամսյակ/ – 2270,0 հազ.դրամ այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)
1. Մետաղական ցանկապատ	դրամ	1	1170.0
2. Ուղեխալցոց	դրամ	20	1100.0

3. Շենքերի և շինությունների ձեռքբերում /2-րդ, 3-րդ եռամսյակ/ – 2100,0

*Ն. Մարտիրոսյան*

6/11

հազ.դրամ, այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)
1. Արավանալեզի համար պահակատան ձեռքբերում	դրամ	1	2100.0

4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում /3-րդ եռամսյակ/ – 24734.0 հազ.դրամ, այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)
1. Անենագնաց սեքենա	դրամ	2	16000.0
2. Տրակտոր	դրամ	1	8734.0

5. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում /3-րդ եռամսյակ/ – 1000.0 հազ.դրամ, այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)
1. Տրի շարժական պոմպեր	դրամ	2	1000.0

*Ն. Մարտիրոսյան*

6/11

6. Նախագծահետազոտական ծախսեր /2-րդ եռամսյակ/ – 466.0 հազ.դրամ, այդ



թվում			
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծախսերի միավորները	Չարիքի միավորը	Լմբոց քանակը (ծավալը)	Շնդհանուր գումարը (հազ. դրամ)
1. Կարչակաճ շենքի վերանորոգման աշխատանքների նախագծի կազմում	դրամ	1	466.0
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծախսերի մեթոդների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 1 530.0 հազ.դրամ,</p> <p>2. Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 2 270.0 հազ.դրամ,</p> <p>3. Ըճճերի շինությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 2 100.0 հազ.դրամ,</p> <p>4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 24734.0 հազ.դրամ:</p> <p>5. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 1000.0 հազ.դրամ</p> <p>6. Նախագծահետազոտական ծախսեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 466.0 հազ.դրամ: Խ</p>		
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	<p>Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</p>		

6/11

*Արթուրյան*

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<p>&lt;&lt; կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի,</p> <p>&lt;&lt; Տավուշի մարզպետարանի, Դիլիջանի քաղաքապետարանի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ</p>
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը</p>



6/11

*Արթուրյան*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

6/11

0010, Երևան, Մեխիբ-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

06.05.15 № 04/80-2/11197-15

Ձեր № \_\_\_\_\_

«Հ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.04.2015թ. N 15/15.4/7072-15 գրության՝ կապված «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում եմ, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուդազյան

N 034/14394-15  
06.05.15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7  
Հեռ. 060 544303

N 06/3-3/10473-15  
29.04.15

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

6/11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.04.2015թ. թիվ 15/15.4/7072-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

N 034/143485-1  
29.04.15



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հայաբյան 41<sup>ա</sup>, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtychan@justice.am

05.05.15 N 02/11/5 207-15

Ձեռք N \_\_\_\_\_

6/11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 28-ի 15/15.4/7072-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ**

Կատարող՝ Մարիաննա Ուդումյան  
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն  
Հեռ.՝ (010) 380-227

N 035/14061-15  
05.05.15թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՎՈՒՇԻ  
ՄԱՐԶՊԵՏ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ  
ГУБЕРНАТОР  
REPUBLIC OF ARMENIA  
TAVUSH REGION  
GOVERNOR

6/11

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, ր. Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyani  
հեռ.тел. phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս<sup>а</sup> /факс, fax / /0263/ 4-00-45  
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.gov.am

N 01/21.1/2196-15  
07.05.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր 28.04.2015թ. թիվ 15/15.4/7072-15 գրության հայտնում եմ, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» ծրագրի մասին որոշման նախագիծը քննարկվել է Տավուշի մարզպետարանում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության: Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Հարգանքով

**Հ.ԱՐՈՎՅԱՆ**

Կատ. Գ. Հարությունյան  
Հեռ. 0263 34561

N 119/14556-15  
07.05.15թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ս

6/12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2015 թվականի N Ա-

քաղ. երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԵՄԱՏՈՒՈՂԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 07/80-2/10541-15 և ապրիլի 18-ի N 06/3-3/9709-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 02/14/4297-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի ապրիլի 14-ի N 01/07-1/3998-15 եզրակացությունները, որ ո ղ ու մ է:

1. Բարեգործական որակել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Հեմատոլոգիա» առարկայի արդիական ուսումնական ծրագրերի ստեղծում» 75,110.15 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ծրագիրը (կցվում է):

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Հ Ա Ս Ս Տ Վ Ա Ս Է

ՀՀ կրթության և գիտության նախարարության նախարարի կողմից կնքված 2015 թվականի մայիսի 14-ի N 01/07-1/3998-15 հրամանի հիմամբ



«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի նախարարության նախարարի կողմից կնքված 2015 թվականի մայիսի 14-ի N 01/07-1/3998-15 հրամանի հիմամբ

<p>Ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) Կենտրոնական ֆակուլտետի Տիգրան Մուշեղյանի անվան մարզու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնը Անգլիայի, Բուլղարիայի, Բուլղարիայի, Բուլղարիայի, Բուլղարիայի և Արբիջանի համալսարանների կենտրոնական ֆակուլտետների իրենց կոլեգաների հետ ստեղծելու են նորացված և Եվրոպական չափանիշներին համապատասխանեցված «Հեմատոլոգիա» (Արյունաբանություն) առարկայի ուսումնական ծրագրերը Հարավային Կովկասյան համալսարանների կենտրոնական և բժշկական ֆակուլտետների բակալավրիատում կամ մագիստրատուրայում դասավանդելու համար, կիրառելով էլեկտրոնային ուսուցման մեթոդները, ինչպես նաև ստեղծելու են Կովկասյան տարածաշրջանային հեմատոլոգիական պլատֆորմ:</p>	<p>«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի նախարարության նախարարի կողմից կնքված 2015 թվականի մայիսի 14-ի N 01/07-1/3998-15 հրամանի հիմամբ</p>
<p>Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մարզային արտոնություններից:</p>	<p>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</p>
<p>Կրթության, տեսալսելիքի միջոցների և մշակույթի գործադիր գործակալություն (Education, Audiovisual and Culture Executive Agency (EACEA)), դրամաշնորհ «EACEA-TEMPUS-JPCR-544282»</p> <p>Հասցեն Education Audiovisual &amp; Culture Executive Agency Avenue du Bourget 1, BOUZ* 1049 Brussels</p>	<p>Բարեգործը</p>
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928</p>	<p>Ծրագիրը կատարողը</p>

6/1

5. Մրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀ Կրթության և գիտության նախարարության <<Երևանի Պետական Համալսարան>> էլեմենտըրում, Կենտրոնական ֆակուլտետի Տիգրան Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն, բնագավառը կրթություն և գիտություն
6. Օրագրի բյուջեն	75110.15 եվրո (կամ համարժեք դրամ, ըստ ՀՀ ԿԲ-ի տվյալ օրվա եվրո / դրամ փոխարժեքի): Այդ թվում 2015 թ. – 40872.68 եվրո 2016 թ. – 34237.46 եվրո
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
8. Օրագրի իրականացման տեղությունը	30.03.2015 - 30.11.2016 թթ. (20 ամիս) 2015 թ.-ին նախատեսվում է ծախսել 40872.68 եվրո, այդ թվում՝ - գիտաուսումնական աարքերի և նյութերի ձեռքբերում 18684 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - գիտաուսումնական նյութերի տպագրություն և հրատարակում՝ 2106 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - գործուղման ծախսեր՝ 5149.66 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - ծրագրի ղեկավարման ծախսեր (աշխատավարձ)՝ 10886.4 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - այլ ծախսեր, 1393.2 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - արացուցիչ ծախսեր, 2653.42 եվրոյին համարժեք դրամի սահմաններում  2016թ.-ին նախատեսվում է ծախսել 34237.46 եվրո, այդ թվում՝ - գիտաուսումնական աարքերի և նյութերի ձեռքբերում 15916 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - գիտաուսումնական նյութերի տպագրություն և հրատարակում՝ 1794 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - գործուղման ծախսեր՝ 4386.74 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - ծրագրի ղեկավարման ծախսեր (աշխատավարձ)՝ 9273.6 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - այլ ծախսեր, 606.8 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, - արացուցիչ ծախսեր, 2260.32 եվրոյին համարժեք դրամի սահմաններում



4/12

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2015 թ.-ին նախատեսվում է՝ - 18684 եվրոյին համարժեք դրամի սահմաններում արտերկրներից ներմուծել (կամ գնել ՀՀ ֆիրմաներից) գիտաուսումնական աարքեր և նյութեր (ինտուրոգիակա, խնամոլոգիակա և կենսաքիմիական վերլուծիչներ, էլեկտրոնային տեխնիկա, ինչպես նաև լաբորատոր գործիքներ և պարագաներ), - 2106 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, ՀՀ-ում կամ արտասահմանում, տպագրել գիտաուսումնական նյութեր (ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն) և հրատարակել գիտական հոդվածներ (ՀՀ և միջազգային հեղինակավոր ամսագրերում):  2016թ.-ին նախատեսվում է՝ - 15916 եվրոյին համարժեք դրամի սահմաններում արտերկրներից ներմուծել (կամ գնել ՀՀ ֆիրմաներից) գիտաուսումնական աարքեր և նյութեր (ինտուրոգիակա, խնամոլոգիակա և կենսաքիմիական վերլուծիչներ, էլեկտրոնային տեխնիկա, ինչպես նաև լաբորատոր գործիքներ և պարագաներ), - 1794 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, ՀՀ-ում կամ արտասահմանում, տպագրել գիտաուսումնական նյութեր (ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն) և հրատարակել գիտական հոդվածներ (ՀՀ և միջազգային հեղինակավոր ամսագրերում):  Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն
11. Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, աարքեր ու նյութեր արտադրող արտասահմանյալ ֆիրմաներ, տեղական և արտասահմանյալ տպարաններ և հրատարակչություններ:
12. Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, աարքեր ու նյութեր արտադրող արտասահմանյալ ֆիրմաներ, տեղական և արտասահմանյալ տպարաններ և հրատարակչություններ:
13. Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Իրականացվում է ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ղեկավարների և գիտական թաղ-ի, միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գ. Գևորգյանի կողմից: Ցուրբանկյուր եռամսյակը մեկ հաշվետվություն է ներկայացվելու: Կրթության, տեսակախոսի միջոցների և մշակույթի գործակալ գործակալությունը և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը:



Handwritten signature or initials.

6/12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

6/12

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

30.04.15 № 07/80-2/9541-15

Ձեր № \_\_\_\_\_

«Կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 15.04.2015թ. N 07/80-2/9514-15 գրության և հաշվի առնելով «Կ  
կրթության և գիտության նախարարության Երևանի պետական համալսարանի կողմից  
22.04.2015թ. N03/354 գրությամբ ուղարկված ծրագրի լրամշակված տարբերակը, հայտնում  
ենք, որ «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
10.04.2015թ. N 15/15.4/5844-15 գրությամբ ներկայացված «Երևանի պետական  
համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Հեմատոլոգիա» առարկայի  
արդիական ուսումնական ծրագրերի ստեղծում» ծրագրի մասին» որոշման նախագծի  
վերաբերյալ դիտողություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7  
Հեռ. 060 544303

N 06/3-3/9709-15

18.04.15թ

6/12

Երևանի պետական համալսարանի  
ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանին

պատճենը՝ «Կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Սիմոնյան

Ձեր 16.04.2015թ. №03/331 գրությամբ ներկայացված «Երևանի պետական  
համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի պետական  
համալսարան» հիմնադրամում «Հեմատոլոգիա» առարկայի արդիական  
ուսումնական ծրագրերի ստեղծման» ծրագրի լրամշակված տարբերակի վերաբերյալ  
լրացուցիչ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Սիրումյան

ԳՄՀԱ բաժին, Ա. Բարսեղյան  
հեռ. 011 800329

Կատարող՝ Ն. Կարապետյան,  
հեռ. 011 910-437

N 034/13602-15  
30.04.15թ.

N 034/1244  
18.04.15թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

6/12

0078, Երևան, Հայաբլայն 41<sup>ա</sup>, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

13.04.15 N 02/14/19297-15

Ձեր N \_\_\_\_\_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 4-ի 15/15.4/5844-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Հեմատոլոգիա» առարկայի արդիական ուսումնական ծրագրերի ստեղծում» ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Կատարող՝ Մարիաննա Ուղումյան  
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն  
Հեռ.՝ (010) 380-227

1035/11488-15  
13.04.15թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ  
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION  
AND SCIENCE

DEPUTY MINISTER

6/12

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Տել.: 58 03 02, ֆաքս/ֆակс (374 10) 52 73 43.  
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 01/07-113998 "14.04".....2015

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր սույն թվականի ապրիլի 10-ի N15/15.4/5844-15 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Հեմատոլոգիա» առարկայի արդիական ուսումնական ծրագրերի ստեղծում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԿՐՏՅԱՆ

կադր. Ն.Սահակյան  
հեռ. 524777

1031/11663-1:  
14.04.15թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՎՈՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

ապրիլի 2015 թվականի N Մ - -Ա  
քաղ. Երևան

6/13

«ՎՈՐԼՂ ՎԻՃԻ ԻՆՅԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ  
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 07/80-2/-15 և ապրիլի -ի N 06/3-3/-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N 02/14/-15 ու Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի ապրիլի -ի N ՖԲ/ԱՆՄ-4/-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական դրակել «Վորլդ Վիժն Ինյեռնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,933,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինյեռնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աստղիկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00935755) հետ 2015 թվականի ապրիլի 14-ին կնքված N WVA/BC/PRINTING/01/ORDER/SOD/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 1,933,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն Ինյեռնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀԱՍՏԱՎԱԾ Է  
«Վորլդ Վիժն Ինյեռնեյշնլ» միջազգային  
բարեգործական կազմակերպության  
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրենի ԺՊ՝  
Սուրեն Սարգսյան  
13 ապրիլի 2015թ.

«Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար»  
Ծրագիր

Ծրագրի նպատակն է նամակագրության միջոցով սերտ կապ հաստատել Հայաստանի Հանրապետության 214 համայնքներում բնակվող և «Վորլդ Վիժն Ինյեռնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի երեխաների հովանավորության ծրագրում գրանցված 35,000 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի ամառ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մայրիկացի, ծանոթանալու մրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այլ երեխաների բնակության համայնքներում ցայրացման ծրագրերի իրականացման միջոցով:	Ծրագրի նպատակն է նամակագրության միջոցով սերտ կապ հաստատել Հայաստանի Հանրապետության 214 համայնքներում բնակվող և «Վորլդ Վիժն Ինյեռնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի երեխաների հովանավորության ծրագրում գրանցված 35,000 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի ամառ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մայրիկացի, ծանոթանալու մրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այլ երեխաների բնակության համայնքներում ցայրացման ծրագրերի իրականացման միջոցով:
Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուրբերի, պատրաստիքի վճարների գծով օրենքով սահմանված արտոմույթյուններից:	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուրբերի, պատրաստիքի վճարների գծով օրենքով սահմանված արտոմույթյուններից:
1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision UK Opel Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK, հեռախոս՝ +44 1908 841000 2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռախոս՝ +1-888-511-6548 3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland, հեռ. : +41-44-510-1579 4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, հեռախոս՝ +33-1-48-03-92-42 5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houllier Platz 4 61381 Friedrichsdorf հեռախոս՝ 06172 / 763 - 0 6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan հեռախոս՝ 886-2-2175-1995 7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada հեռ. 905-565-6100	1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision UK Opel Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK, հեռախոս՝ +44 1908 841000 2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռախոս՝ +1-888-511-6548 3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland, հեռ. : +41-44-510-1579 4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, հեռախոս՝ +33-1-48-03-92-42 5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houllier Platz 4 61381 Friedrichsdorf հեռախոս՝ 06172 / 763 - 0 6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan հեռախոս՝ 886-2-2175-1995 7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada հեռ. 905-565-6100
Բարեգործը	Բարեգործը

6/13



6/13

4	Ծրագրիը կատարողը	«Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ <i>Zusatz: Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս +37460491010</i>
5	Ծրագրի իրականացման վաղը և բնագավառը	Իրականացման վայրն է հանրիսանում «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Անախիայի, Բջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 214 համայնքները (համայնքների ցանկը կցույց է): Ծրագրի բնագավառը սոցիալական:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1.933,000 (մեկ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ արանց ԱԱՀ-ի:
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Անախիայի, Բջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 214 համայնքներում բնակվող 35,000 երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	15 ապրիլի 2015թ. - 15 մայիսի 2015թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է 2015թ. ապրիլի 15-ից մինչև 2015թ. մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում նաևակազրական նյութեր տպագրել «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի երեխաների համար: Տպագրական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 1.933.000 (մեկ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ արանց ԱԱՀ-ի: Նամակազրակայան բարեգործությունը կրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագրի, ծավալների և նախատեսվող գինը	«Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների Հովանավորության ծրագրի աշխատակիցներն ապահովելու համար տպագրվելու են նամակազրական նյութեր: Նամակազրակայան նյութերի տպագրությունն իրականացվելու համար «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքելու «Ատոլիկ» ՍՊԸ-ի հետ: Աշխատանքները սկսվելու են 2015թ. ապրիլի 15-ին և ավարտվելու են մինչև 2015թ. մայիսի 15-ը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.933.000 (մեկ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ արանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:

12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 214 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Անախիայի, Բջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Ազգային գրասենյակի Երեխաների Հովանավորության բաժնի մասնագետների կողմից: «Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային ատոլիկ, ինչպես նաև հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգչային հանձնաժողով:

«Վերլույ Վիժն Ինճեռնեշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների Հովանավորության բաժնի ղեկավար

Մաղեն Մուրադյան *K. Haryan*

6/13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

6/13

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 60) 700 255

21.04.15 № 04/80-2/

Ձեր № 10083-15

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 16.04.2015թ. N 15/15.1/6325-15 գրության՝ կապված «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ասոմ Զանցուդաջյան

034/12860-15



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/9836-15

20.04.15

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

6/13

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 16.04.2015թ. N15/15.1/6325-15 գրությանը կից ներկայացված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ.Միրումյան

034/12624-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հայաբյան 41\*, հեռ. 380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

20.04.15 N 02/14/4693-15

Ձեռ N \_\_\_\_\_

6/13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի 15/15.1/6325-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագրի ծրագրի ծրագրի ծրագրի համար» ծրագրի ծրագրի համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Կատարող՝ Մարիաննա Ուդոմյան  
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն  
Հեռ.՝ (010) 380-227

035/12625-15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

6/13

« 18 » 04 2015 թ.

N ԲԻ/ԱԶՁԻ-2-1/

Ձեռ 2015-04-16, 15/15.1/6325-15

3303-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30  
http://www.mlsa.am info@mlsa.am

040/12404-15

6/14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
2015 թվականի N Մ-  
քաղ. երևան -Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-  
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՏԵ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-  
ԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶՐՀՈՐԻ ԵՎ  
ԶՐԱԳԾԻ ԿԱՐՈՒՑՈՒՄ ԴՊՐՈՑԻ ՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10895-15 և ապրիլի 29-ի N 06/3-  
3/10450-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015  
թվականի ապրիլի 30-ի N 02/14/5105-15, Հայաստանի Հանրապետության փրկարկային  
կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի մայիսի 7-ի  
N 1/02.3/5817-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի  
ապրիլի 28-ի N 01/2065 -15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական  
կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397)  
կողմից իրականացվող՝ 2,612,245 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրա-  
պետության Շիրակի մարզի Բյուրակն գյուղում ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի ու  
հարակից տների համար» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատա-  
կով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից  
կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականաց-  
ման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված՝  
N 181/DWSB/15/07/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի  
Հանրապետության Շիրակի մարզի Բյուրակն համայնքում ջրհորի և ջրագծի կառուցման  
աշխատանքների իրականացում՝ 2,612,245 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի  
հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրա-  
գրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-  
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներ-  
կայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-  
տանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների  
նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Հ Ա Ս Ս Ս Վ Ս Ս Է  
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության  
գործադիր Տնօրեն՝ Ազգիկ Տարապանի կողմից  
«20» ապրիլի, 2015 թ.




«Շիրակի մարզի Բյուրակն գյուղում ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի և հարակից տների համար»  
ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Իրականացնել ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի և հարակից տների համար
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Այնպիսով և ստանալ Ավելացված կիծեքի Հարկից ազատման արտոնություն
3	Բարեգործը	Կարիտաս Իտալիա բարեգործական կազմակերպություն Via Aurelia 796, 00165 Roma, ITALIA
4	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գյումրի, Գ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ԳՎՀԳ՝ 05514397
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզի Բյուրակն գյուղ, բնագավառը՝ ջրամատակարարում
6	Ծրագրի բյուջեն	2.612.245 դրամ առանց ԱԱՀ-ի
7	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի Բյուրակն գյուղի բնակիչները
8	Ծրագրի իրականացման տևողությունը	4 ամիս, մայիս 1 - օգոստոս 31, 2015 թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է ջրհորի փորում, խողովակաշարի անցկացում, պոմպի տեղադրում: Ծրագիրն իրականացվելու է 2015թ. մայիս-օգոստոս ընկած ժամանակահատվածում: Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 2.612.245 դրամ առանց ԱԱՀ-ի:

6/1

<p>10</p> <p>Չեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Չեռք կբերվեն 22 օր՝ <math>d=25</math> մե-ոց սինթետիկ խողովակներ, պոմպի ձևավոր մասեր, կոզուսագործիչի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք:          Ծրագիրն իրականացվելու է 2015թ. մայիս-օգոստոս ընկած ժամանակահատվածում:          Չեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 2.612.245 դրամ առանց ԱԱՀ-ի:          Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արիստեխ-շին» ՍՊԸ-ի կողմից:</p>
<p>11</p> <p>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</p>	<p>1. Ակտոմեթենայի վառելանյութ և շահագործում՝ 10 000 ՀՀ դրամ          2. Փոստային և համրային կապեր՝ 5 000 ՀՀ դրամ          Ընդամենը կազմակերպչական՝ 15 000 ՀՀ դրամ</p>
<p>12</p> <p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Շիրակի մարզպետարան: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողովի հետ</p>
<p>13</p> <p>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանն ու համայնքապետարանն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները:          Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով:</p>

6/14



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
 Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

6/14

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1  
 Հեռ. (+374 60) 700 255

04.05.15 № 0780-2/10899

Ձեր № \_\_\_\_\_

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.04.2015թ. N 15/15.4/6943-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բյուրակն գյուղում ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի ու հարակից տների համար» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան  
 հեռ, 011 910-437

034/14044-15  
 04.05.15թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7  
Հեռ. 060 544303

*N 06/3-3/10450-15*  
*29.04.15թ*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*6/14*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.04.2015թ. թիվ 15/15.4/6943-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բյուրակն համայնքում ջրհորի և ջրազծի կառուցում դպրոցի ու հարակից տների համար» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

 Վ. Միրոնյան

*N 034/13448-15*  
*29.04.15թ*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41<sup>ա</sup>, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

*30.04.15թ. N 02/14/5105-15*  
Ձեր N \_\_\_\_\_


*6/14*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 27-ի 15/15.4/6943-15 հանձնարարականի հայտնում ենք, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բյուրակն համայնքում ջրհորի և ջրազծի կառուցում դպրոցի ու հարակից տների համար» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

*N 035/13700-1*  
*30.04.15թ*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

6/14

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8  
0054, Ереван, Давидашен 4, ул. А. Микояна 109/8  
109/8, A. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054  
Հեռ./Տեղ./Տեղ. (+374 10) 31 77 02  
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49  
Էլ. փոստ / E-mail: mes@mes.am

N/22.3/5817-15

07.05.2015 թ.

«Հ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
նախագահ Ա. Տեր-Սիմոնյանին»

Ի պատասխան Ձեր 29.04.2015թ.  
թիվ 15/15.4/6943-15 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից  
իրականացվող «Հայաստանի Հանրապետության Ծիրակի մարզի Բյուրակն գյուղում  
ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի ու հարակից տների համար» ծրագրի մասին»  
որոշման նախագծում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության  
տարածքային կառավարման նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի  
Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների  
նախարարություն» բառերով:

Վերոնշյալ ծրագիրը նպատակահարմար ենք գտնում որակել որպես  
բարեգործական:

Հարգանքով՝

Ա.Տերիցյան

Կարգադրող՝ Ա. Ասլանյան  
Հեռ՝ 010-31-77-21

N 025/14547-15  
07-05.15թ.



6/14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« 28 » 04 2015թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: 01/2065-15

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

«Հ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Ձեր՝ 27.04.2015թ.

թիվ՝ 15/15.4/6943-15

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի  
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության  
կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության Ծիրակի մարզի  
Բյուրակն գյուղում ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի ու հարակից տների  
համար» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը  
և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝

Ֆ.ՅՈՒԼԱԿՅԱՆ

կատ Հ.Արշակյան  
/0312 3-16-26/

N 116/13407-1.  
28.04.15թ.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բյուրակն գյուղում ջրհորի և ջրագծի կառուցում դպրոցի ու հարակից տների համար» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ արաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

<p>Դիտողության կամ արաջարկության բովանդակությունը</p>	<p>Հիմնավորում</p>
<p>«Հայաստանի Հանրապետության և արտակարգ իրավիճակների նախարարության դիտողությունների և արաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագծում արաջարկում են «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն» բառերով: Վերոնշյալ ծրագիրը նպատակահարմար են գտնում որակել որպես բարեգործական:</p>	<p>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան ուղղում:</p>

6/14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
 ----- 2015 թվականի N Մ- -Ա  
 քաղ. երևան

6/15

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱԿԱԿԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10702-15 և ապրիլի 29-ի N 06/3-3/10447-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 02/14/5103-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի մայիսի 28-ի N 01/02.3/5818-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի ապրիլի 28-ի N 01/2062-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 3,461,229 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան գյուղի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 182/DWSN/15/07/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 2,540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
